տար տրանսպորտի ներհանրապետական երթուղիներից երկկողմանի կարգով տարին մեկ անգամ **50 տոկոս զեղչի իրավունք**:

Նրանք ներկայացնում են երթևեկության վկայական և կտրոնային թերթիկ:

ԻՆՉՊԵ՞Ս ՍՏԱՆԱԼ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԿԱՅԱԿԱՆ

Երթևեկության վկայական ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության տրանսպորտի վարչություն (մարզերի բնակիչները՝ մարզպետարաններ)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

ա) համապատասխան արտոնությունը հաստատող փաստաթղթերը, որոնց պատճենները արվելուց հետո դրանք վերադարձվում են քաղաքացուն,

բ) անձնագիրը (մինչև 16 տարեկան երեխաների ծննդյան վկայականը)՝ պատճենի հետ միասին (անձնագրի 2-րդ ,3-րդ և 5-րդ էջերը),

գ) մեկ լուսանկար 3x4 չափի (լուսանկարի հակառակ կողմին քաղաքացու կողմից ընթեռնելի գրվում է իր ազգանունը, անունը, հայրանունը):

Նախարարությունում վերոնշյալ փաստաթղթերի ընդունումը կատարվում է աշխատանքային բոլոր օրերին, ժամը 10.00-ից մինչև 17.00, ընդմիջումը՝ ժամը 13.00-14.00: Վկայականները քաղաքացիներին տրվում են փաստաթղթերը հանձնելուց 5 աշխատանքային օր հետո՝ երեքշաբթի և հինգշաբթի օրերին, ժամը 9.30-ից մինչը 16.00-ն, ընդմիջումը 13.00-14.00:

Վկայականների պատրաստման արժեքը 300 դրամ է, որը ՀՀ պետական բյուջեից չփոխհատուցվելու դեպքում գանձվում է քաղաքացուց:

Վկայականը կորցնելու դեպքում քաղաքացին նոր վկայական կարող է ստանալ միայն կորցնելու մասին 300 օրինակից ավելի տպաքանակ ունեցող ՀՀ որևէ լրատվամիջոցում հայտարարություն տալու օրվանից 45 օր հետո՝ վերոնշյալ փաստաթղթերը ներկայացնելու և 300 դրամ վճարելու դեպքում:

Վկայականը ոչ պիտանի դառնալու դեպքում քաղաքացուն դրա կրկնօրինակը տրվում է ոչ պիտանի վկայականը հանձնելուց 5 օր հետո:

Վկայականների փոխանցելը, նվիրելը, օտարելը (վաճառելը) արգելվում է:

ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Վկայականները տրվում են՝

ա) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին ԲԱՓՀ-ի կողմից հաշմանդամության կարգավիճակի սահմանված ժամկետով,

բ) մանկուց հաշմանդամներին՝ մինչև 18 տարին լրանալը,

գ) մնացած խմբերին՝ անժամկետ:

Կոնտակտներ

ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության տրանսպորտի վարչություն, հեռ. 586202; 589790:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում Հայաստանում ուղևորատար տրանսպորտով երթևեկության արտոնություն ունեցող քաղաքացիների խմբերի, արտոնությունների տեսակների, արտոնյալ պայմաններով երթևեկելու իրավունքը հավաստող վկայականի ստացման կարգի և հարակից հարցերի մասին:

Մայիս 2005

Ո՞Ր ԽՄԲԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԵՆ ՕԳՏՎՈՒՄ ՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Ուղևորատար տրանսպորտով երթեկության արտոնության իրավունքից օգտվում են.

ա) զինծառայողները,

բ) Հայաստանի ազգային հերոսները, մարտական խաչի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձինք,

գ) Նախկին ԽՍՀՄ հերոսները, սոցիալիստական աշխատանքի հերոսները, «Փառքի» երեք աստիճանի շքանշանով պարգևատրված անձինք,

դ) Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի համար նախկին ԽՍՀՄ շքանշաններով և մեդալներով պարգևատրված անձինք,

ե) Մինչև 7 տարեկան երեխաները,

զ) Ծերանոցներում, մանկատներում ապրող պետական լրիվ խնամքի տակ գտնվող անձինք,

է) 5 և ավելի երեխա ունեցող ծնողներից մեկը,

ը) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները և բռնադատվածները,

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՕԳՏՎՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

Ներքաղաքային, մերձքաղաքային (մինչև 50 կմ), միջքաղաքային (50 կմ-ից ավելի) ուղևորատար տրանսպորտով (բացի տաքսուց) անվճար երթևեկության իրավունք ունեն՝

1.

ա) Հայաստանի ազգային հերոսները,

բ) մարտական խաչի 1-ին և 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրված անձինք,

գ) նախկին ԽՍՀՄ հերոսները, սոցիալիստական աշխատանքի հերոսները, «Փառքի» երեք աստիճանի շքանշանով պարգևատրված անձինք,

դ) մինչև 7 տարեկան երեխաները:

Վերոնշյալ անձինք, բացի մինչև 7 տարեկան երեխաներից, միջքաղաքային տրանսպորտից երկկողմանի կարգով անվճար օգտվելու իրավունք ունեն տարեկան մեկ անգամ:

Նրանք, բացի մինչև 7 տարեկան երեխաներից, ունեն օդային ուղևորատար տրանսպորտի ներհանրապետական երթուղիներից տարին մեկ անգամ երկկողմանի կարգով, **50 տոկոս զեղչով օգտվելու իրավունք:** Մինչև 7 տարեկան երեխաները օգտվում են **անվճար,** անսահմանափակ անգամ՝ առանց առանձին նստատեղի հատկացման:

Վերոնշյալ խմբին պատկանող անձինք, բացի մինչև 7 տարեկան երեխաներից, երթևեկում են երթևեկության վկայականով, միջքաղաքային տրանսպորտից օգտվելու դեպքում՝ նաև կտրոնային թերթիկով, իսկ մինչ 7 տարեկան երեխաները երթևեկում են տարիքը հաստատող փաստաթղթով՝ միջքաղաքային երթուղիներում՝ առանց առանձին նստատեղի հատկացման:

2. Ծերանոցներում, մանկատներում ապրող պետական լրիվ խնամքի տակ գտնվող անձինք օգտվում են **ներքաղաքային և մերձքաղաքային (մինչև 50 կմ)** ուղևորատար տրանսպորտով **անվճար**, իսկ **միջքաղաքային (50 կմ-ից ավելի)** տրասնպորտով՝ **50 տոկոս զեղչով** երթևեկելու իրավունքից:

Վերոնշյալ անձինք ներքաղաքային և մերձքաղաքային երթուղիներում երթևեկում են երթևեկության վկայականով, իսկ միջքաղաքային երթուղիներում՝ իրենց կարգավիճակի մասին համապատասխան տեղեկանքով:

3. Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի համար նախկին ԽՍՀՄ շքանշաններով և մեդալներով պարգևատրված անձինք, 5 և ավելի երեխա ունեցող ծնողներից մեկը, 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամները և բռնադատվածները (բացի ավտոբուսից, երթևեկության վկայականով) օգտվում են **ներքաղաքային** ուղևորատար տրանսպորտով **անվճար** երթևեկելու իրավունքից: Նրանք պետք է ներկայացնեն երթևեկության վկայական:

1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներն ունեն **օդային** ուղևորատար տրանսպորտի ներհանրապետական երթուղիներից հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 31-ը մեկ անգամ և տարվա մնացած ընթացքում ևս մեկ անգամ, ինչպես նաև բժշկաաշխատանքային փորձաքննական հանձնաժողովի (ԲԱՓՀ) եզրակացության համաձայն առողջարանային բուժման մեկնելիս և վերադառնալիս **50 տոկոս զեղչով օգտվելու իրավունք:** Այս արտոնությունը տարածվում է նաև 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամին կամ հաշմանդամ երեխային ուղեկցող անձի վրա:

4. Զինծառայողներն ունեն **ներքաղաքային** ուղևորատար տրանսպորտով **անվճար** երթևեկելու, ինչպես նաև արձակուրդի վայր մեկնելիս **օդային** ուղևորատար տրանսպորտի ներհանրապետական երթուղիներից **անվճար** օգտվելու իրավունք:

ՀՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների պատճառով, զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելուց հետո ստացած վնասվածքների, խեղումների, հիվանդությունների հետևանքով հաշմանդամ դարձած զինծառայողները (նրանց հավասարեցված անձինք), ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամները (ամուսիններ, երեխաներ, ծնողներ) ունեն **օդային** ուղևորատար տրանսպորտի ներհանրապետական երթուղիներից երկկողմանի կարգով տարին մեկ անգամ **անվճար** օգտվելու իրավունք:

Վերոնշյալ անձինք ներկայացնում են երթևեկության վկայական և կտրոնային թերթիկ:

ՈՎՔԵ՞Ր ՈՒՆԵՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՂՉՈՎ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների պատճառով հաշմանդամ դարձած անձինք, ինչպես նաև մասնակիցները, որոնք հետագայում հաշմանդամ են դարձել, ունեն **օդային** ուղևորատար տրանսպորտի ներհանրապետական երթուղիներից հոկտեմբերի 1-ից մինչև մայիսի 31-ը մեկ անգամ և տարվա մնացած ընթացքում ևս մեկ անգամ, ինչպես նաև բժշկաաշխատանքային փորձաքննական հանձնաժողովի (ԲԱՓՀ) եզրակացության համաձայն առողջարանային բուժման մեկնելիս և վերադառնալիս **50 տոկոս զեղչով օգտվելու իրավունք:** Այս արտոնությունը տարածվում է նաև նրանց ուղեկցող անձի վրա:

2. Հայրենական մեծ պատերազմի և այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները և զոհված զինծառայողների ընտանիքի անդամները (ծնողներ, այրիներ) ունեն **օդային** ուղևորա-